



ՄԱՐԺԱՐԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36-րդ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 7 ՄԱՐՏ 1887

ԹԻԻ 3863

ՄԱՐԺԱՐԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՑԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր: եւ օտար երկրաց համար 15 ֆըրանք: Բաժանորդագրելու զրկելու է առ մատակարարութիւն Սրբեկոյի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԿՈՒԹԱՅԻՆ

Table with 2 columns: Name and Address/Details. Includes entries like Ա. Ա. Ազգային (Վերջին դեպքեր), Ա. Ս. Սրբեկոյի (Սրբեկոյի պէս), etc.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 6 ՄԱՐՏ

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՐՋԻՆ ԴԵՊՔԵՐԸ

Կայսերական հրամանն, որոյ համեմատ Պէշիքթաշի գերեզմանատունը պիտի վերածուի պարտէզի մը առանց ոսկերաց այլուր փոխադրութեան, խորապէս յուզեց Հայոց սրտերը: Զորքը շարժի երեկոյ ամէն հայ տխրադէմ էր, հինգ շարժի առաւօտ ուրախութիւն կը փայլէր ամէն երեսներու վրայ: Ո՛հ այն տրտմութիւնն, ո՛չ այդ ուրախութիւնը վերլուծել կարելի է, վասն զի այնպիսի զգացումներ են որք ենթարկեալ չեն մաթեմատիքային ճշգրիտ օրինաց:

Շատ դարերէ ի վեր — յորմէ հետէ բացուած է ազգային դժբաղդութեանց թուականը — մեր սրտերն անլուծանելի կապերով կապուած են մեր գերեզմանատուներու հետ, զի գերեզման մը մեր տան մասը կը կազմէ:

Գերեզմանատուները կեդրոններ են ուր կը սլանան Հայոց սրտերն ամէն կողմէ: Ուր որ ալ գտնուինք, Սեբաստիա թէ՛ Վան, Ակն թէ՛ Կարին, Բաղէշ թէ՛ Սիս, ամէն ուրեք կը յիշենք թէ Պոլիս կայ գերեզմանատուն մը ուր կը հանգչի Հայր մը, եղբայր մը, մայր մը: Եւ մեզմէ ո՞վ

չունի սիրելի մը ասիական գերեզմանատանց մէջ: Այդ տխուր յիշատակներն են որ Հայոց սրտերն այնքան սերտ կապած են իրենց գերեզմաններու հետ: Գերեզմանատուներն իրենց նշանակութիւնն ա՛յն օրը պիտի փոխեն մեզ համար երբ այլ եւս պանդխտութիւն չունենանք:

Կայսերական հրամանն գոհացուցիչ տպաւորութիւն ըրաւ հայ ժողովուրդի սրտի վրայ եւ սակայն վերջին մէկ ու կէս ամսուան դէպքերն ամէն ուրեք դժգոհութիւն առաջ բերին նրկատմամբ այն անձանց, եկեղեցական թէ՛ աշխարհական՝ որք կը վարեն մեր ներքին գործերն. ամէն ուրեք յայտնի եղաւ թէ մէնք կարող չենք ծանր խնդիրներու մէջ խոհական խելքով խորհիլ, անկեղծ ազգասիրութեամբ գործել: Ինչպէս մեր նախորդ յօդուածին մէջ ըսինք, փոխադարձ անվստահութիւն միմեանց վրայ՝ այս է մեր ուղղութիւնն:

Ո՛հ ոք մեղապարտ է մեղապարտն աղբն է, կը ծագի ծանր խնդիր մը, աղբին ամենէն կենսական շահուց վերաբերեալ եւ ահա՛ ամէն ոք կը դռնէ: «Ի՞նչ պիտի ընէ Ազգային ժողովը»: Ամէնուն աչքերն յառած են դէպ ի Ազգ. ժողովը եւ սակայն նոյն իսկ ամենէն աւելի բարձրագոյն Ազգ. ժողով ազադակողներն նոքա են որք միշտ արհամարհանօք նայած են Ազգ. ժողովոյ վրայ, երբեք չեն ուղած մասնակցել՝ երեսփոխանական ընտրութեանց: Ունին այժմ իրաւունք խլաւտապահանջ լինելու:

Անցեալին վրայ միշտ ողբալու, զիրար միշտ նախատելու դրութեան կողմնակից չենք, այլ ամէն դժբաղդութենէ օգտուելու փափագողներ ենք: Այս վերջին դէպքերը կ'օտուցանեն թէ՛ ամէն թուրքիացի՝ հայուն շահը կը սպասանէ որ այլ եւս անտարբեր հանդիսատես մը չըլինի երեսփոխանական ընտրութեանց: Երբ երեսփոխանական ժողովն ունենայ խոհական մեծամասնութիւն մը, աղբը կ'ունենայ այնպիսի Պատրիարք, այնպիսի Կրօն. և Բաղ. ժողով, որոց վրայ կատարելապէս վստահութիւն ունենալու իրաւունք կ'ունենայ: Մեր դժբաղդութիւնն այն է, շատ տարիներէ ի վեր, որ միշտ կասկածոտ, անվստահ եղած ենք մեր դործող գլուխն եղող անձանց մասին: Որոնք որ եղած են Պատրիարք, Կրօն. և

Բաղ. ժողովոց անդամք, միշտ իրենց քայլերուն հանդէպ այդ խոչնդոտներն ունեցած են:

Ժամանակն հասած է որ Ազգն երեսփոխանական ընտրութեանց միջոցաւ վախճան մը տայ այս տխուր կացութեան որ ո՛չ միայն օգտակար չէ, այլ նաեւ անպատուաբեր է:

Իսկ առ այժմ Ազգ. ժողովն, այս ցնցումէ վերջ, ինքզինքն ամբողջով, եւ կշռելով իւր վրայ ծանրացած պատասխանատուութեան մեծութիւնն, ըստ այնմ գործելու պէտք է պատրաստուի: Նորանոր խնդիրք կան, որոց համար պարտաւոր է Ազգ. ժողովն իւր բոլոր խոհմտութիւն ի գործ դնել: Կրքով շարժելու ո՛չ մի պատրուակ կայ: Վերջին դէպքերուն առթիւ այլ եւս կուսակցութիւն չմնաց, ամէնքն իրարու խառնուեցան:

Վերջ տալով կրքերու, փակելով անցեալ հաշիւներն, այլ եւս մերժելով վարպետութեամբ գործելու մէթոտն, կատարեալ ուղղամտութեամբ կատարենք այն պարտականութիւններն որք կը ծանրանան մեր վրայ:

Ա. Ա.

Ամեն Սրբազան Պատրիարք Հայրն Պէշիքթաշի գերեզմանատան խնդրոյն համար այս չորեքշաբթի անձամբ Կայսերական Պալատն դիմած և յանձնած էր սոյն խնդրոյն նկատմամբ Արքունեաց հրամանատար Բարձր. Ղազի Օսման փաշայի ուղղած դրոյն պատասխանն:

Բարձրապատիւ Օսման փաշա ընդունելով պատասխանադիրն յանձնեք է Բ. Սենեկապետ Վսեմ. Հաճի Ալի Պէշին, որ մատուցանելէ յետոյ զայն Վեհ. Կայսեր. վերադարձեր և Նորին Կայսերական Վեհափառութեան Հրամանն հաղորդեր է, ըսելով.

«Նորին Վեհափառութիւնը իւր հըպատակաց կրօնական զգացմանց հապառակ կամք չունի:»

«Նախնեացս նման ինչպէս հպառակ Յոյն և միւս ազգաց, նոյնպէս և «Հայոց եկեղեցեաց և նուիրական սեպհականութեանց պաշտպանն եղած եմ, և պիտի մնամ քանի որ ժողովրդեան կրօնական զգացմանց չը «յարմարըր ոսկերոտեաց փոխադրութիւնն, ինքնին փոխադրութեան հըրամանն չեմ կարող ընել. հոգ չէ, «թող մնան ոսկերոտիքն, միայն թէ «այդ Պէշիքթաշի անգործածելի Դերեզմանատունը՝ գերեզմանատուն մը «նալով հանդերձ վանդակորմով չըջապատուի, ծառ և ծաղիկ անկուի, «որ կարծեմ թէ այս ալ կրօնական ըզգացմանց չդպչիր:» (Արեւել.)

ԱՐՈՒԹԻՆ ՊԵԿ

Բ.

Ուսումնական կրթական մեքենայութեանց զոր եղող ընտանիքներու գլխաւորն էր Սիւրբովներու ընտանիքն, ազնուական, հարուստ, բազմաբեղուն ընտանիք՝ որոյ ազգականները կը կազմէին երեսուն տուն։

Այս մեծ տոհմը ջերմ հայադաւան էր եւ հայ, եւ սարսափած մնաց տեսնելով ռուսական դաւերը։ Տոհմին պետն Արուսթին պէկ Սիւրբով վառահար այն ազնաւոր համար որը կը պատրաստէին իւր հայրենակցաց, կը դիմէ ի Թիֆլիզ, կը գտնէ Ներսէս Կաթողիկոսը, կը պարզէ նմա իրաց վիճակն եւ կը խնդրէ նորա օգնութիւնը։

Ներսէս Կաթողիկոս չփոթեալ կը մնայ մեքենայութիւնները շատ նուրբ են, գործն առաջ գնացած է, դարմանն անհնարին ինչ որ եղած է, եղած է. պէտք էր մտածել նորանոր չարիքներն արգելուլ Առաջին մտածութիւններն է փրկել նախ Սիւրբովներու տոհմն. պարզ միջոց մը կը խորհի Արուսթին պէկ. իւր տոհմին դանազան տուներէն կը ժողովէ տասն եւ հինգ տղայք եւ կը բերէ զանոնք Թիֆլիզ Ներսէսեան դպրոցը կը գնէ, այդ տղայներէն մի բանին ապագային մէջ բահանայ ձեռնադրել տալու խորհրդով։ Սիւրբեան բահանայներն երկու նպատակի պիտի ծառայեն. նախ՝ մարտնչիլ ընդդէմ ռուս եկեղեցականաց եւ պաշտպանել Ուստացի հայադաւանն. երկրորդ՝ փրկել Սիւրբովներու տունն. եւ արդարեւ երբ Ռուսը պնդեն թէ ռուսադաւան են Սիւրբովներ որքա պիտի կարենան պատասխանել. — «Ինչպէս կարելի է որ Ռուսադաւան լինի մի ընտանիք որ իւր մէջ հայ բահանայներ ունի»։

Սիւրբով պատանիները կը կրթուին Ներսիսեան դպրոցի մէջ կատարեալ հայ դաստիարակութեամբ, սակայն ո՛չ ոք ի նոցանէ քահանայ կը ձեռնադրուի Ռուսաց Եկեղեցին որ ի Թիֆլիզ էր աչքերն յառած էր Ներսէսեան վարժարանի պատանի Սիւրբովներու վրայ, եւ երբ իմացաւ թէ անոնցմէ ոմանք կոչուած են քահանայ լինել, ի գործ դրաւ ամէն միջոց արգելելու համար այդ խորհուրդի իրագործումն. Եկեղեցին յաջողեցաւ, բայց միթէ կրցաւ ջնջել նոցա պրտերու մէջէն հայութեան սէրն։ Ո՛չ, Այդ պատանիներն նուանդոտ հայեր եղան եւ մին անոնցմէ Ալեքսան պէկ Սիւրբով որ նոցա պարագլուխն էր եւ միշտ քաջութեամբ ու խելքով պաշտպանեց թէ՛ իւր տոհմն եւ թէ՛ Ուստացիներն, այժմ՝ արքայութեան կը մնայ ի Կրասնուայ։

Սիւրբովներու տոհմն այլեւս չհանդուրժեր. հայ եկեղեցւոյ գրօշակը պարզած կը պատերազմին յայտ յանդիման ռուսական կրօնից տարածման դէմ։ Արուսթին պէկ, Պապա պէկ եւ Երիտասարդն Ալեքսանպէկ, խրենց բոլոր քաջասրտութեամբ կը դիմադրեն Ռուսաց. «Մեր կրօնքէն, մեր հաւատքէն չենք բաժնուիր», այս կը լինի փրենց պատասխանն ամէն արտահայտեաց մե ամէն շողորթութեանց դէմ։

Բոթերը, խռովեալ, վրդովեալ կը ծանուցանեն Թիֆլիզի Եկեղեցին որ վտանգը մեծ է. իրենց այնքան տարիներու համբերութիւնն, այնքան ձեռք բերած արդիւնքները պիտի փճանան եթէ Սիւրբովներն այդպէս ապաստամբ մնան եւ մարտնչին շուղափառութեամբ տարածման դէմ։ Եկեղեցին որ արդէն կասկածոտ էր, կը դիմէ Բիւսանա-

թեան եւ կը պահանջէ որ Սիւրբովներու պարագլուխներն արքայութիւն ի Թիֆլիզ, ուր անկարող լինին մարտնչիլ ընդդէմ ռուս եկեղեցւոյ, Եկեղեցին կամբը կը կատարուի եւ ահա որ մը Սիւրբովներու գլխաւորները զինուորական գործութեամբ կը տեղափոխուին ի Թիֆլիզ ուր խիստ հսկողութեան ներքեւ կը մնան։

Մեծ յուզում կը տիրէ ի Վարդաշէն եւ ի Նեփ. Մինչեւ անգամ խեղճ Ուստացի կանայք որք հայերէն մի բառ անգամ չեն գիտեր զայրացած կը գոչեն. «Մեր ծծկեր երեխաներով կը դիմենք մենք ալ բոցի եւ սուրի, բայց մեր հարց կրօնը չենք թողուր»։

Այս լուրերը կը հասնին Երզրաբէն եւ նա հեռագէտէ ստացողանել կուտայ հսկողութիւնն արքայութեան Սիւրբովներու վրայ, բայց այդ ամենատաք միջոցին յանկարծ լուր կը տարածուի թէ՛ Սիւրբովներու գլխաւորն Արուսթին պէկ աներեւութացած է Թիֆլիզէն։ Ռուս գնացեր է. Ո՛չ որ գիտէ. Բայց մի ժամանակ վերջ կ'իմացուի. Արուսթին պէկ Բեղերուպուրի գնացեր է Կայսեր դիմելու։ Երբեք կը գրէ Բեղերուպուրի Սինօդին որ զգոյշ կենան այդ անձէն, երես չտան նմա, ջանան որ Կայսեր չներկայանայ եւ ինչ որ կարելի է ընեն արգելքներ յարուցանելու համար ընդդէմ նորա։

Երբեք հրահանգները կատարելապէս կը գործադրուին. Արուսթին պէկ Ռուսաց մայրաքաղաքի մէջ կենտակայ է ամէն տեսակ հալածանաց եւ կարող չլինի ո՛ր է միջոցաւ ներկայանալ Կայսեր։

Ա. ԱՐԹԻԱՐԵԱՆ

Ա. ԶԵԼԼԱԷ

ՀԻՆ ԵՐԳ

Ա.

Թէ կայ փառկիկ մի մարմանը
Ջոր այցն ողորդ.
Մի մարմանը ուր երկնաւանդ
Մի բարութ ցօղէ,
Եւ ուր բողի կարեմամբ
Յաւովի, շաշան, շահեքամ,
Ո՛հ, ես յաւետ կը բաղձամ
Որ ոտնդ անց կոխէ...։

Բ.

Թէ կայ մի կուրծ պիտաւուն
Որ ցանցէ պապի.
Միշտ անճերէր, անճերիւն,
Վեհ լինի սրտի,
Բարոյն համար մարտնչի,
Ուր ոչինչ վաս բան բազի.
— ձեռնադր կ'ուզեմ որ հանգի
Անց գիշեր եւ տիւ...։


Գ.

Թէ կայ պիտոյ մի երազ
Քաղցրիկ, վարդագոյն,
Ջոր արարեմ վազն ի վազ
Յօլովներն արվաւոյն.
Ջոր Աստուած օրհնի հաճի,
Ուր հոգին լուսով անի...
— Ա՛հ, կ'ուզեմ որ անց հանգի
Սիւրբ իբրեւ ի բոց...։

Թարգմ.
Ա. Գ. Փ.

(Վ. Հիւնո)

ԱՂԶԿԱՆ ՄԸ ՕՐԱԳԻՐՆ



Կեդրոնական վարժարանի կերակներն. — Աւել տուք Ազգային Պատրիարքարանի մէջ. — Հոգւոյ փրկութիւն. — Բանաստեղծութիւն մը՝ որ վաղ իրականութիւն մը պիտ'ըլայ. — Ժան-Պաղիսէ Սէյի գրառքներն. — Տարաբաղուն Մուսա։

2 Մարտ

Այսօր վերջնայէս կը յաղթեմ զանդաղութեանս, եւ կ'ընդօրինակեմ քեզ՝ Պ. Քալանթարեանցի դասախօսութեանց վրայ Անդրանիկ Էֆէնտիի կրկին նամակներն առ հայրս։

«Յարգող բարեկամ,

«Այս գիշեր Բերա պիտի անցնեմ։ Քիտեմ որ Կեդրոնական վարժարանի դասախօսութեան վրայ լուր կ'ուղչեմ։ Գարեջրատուն մը կը մտնեմ եւ կը գրեմ ձեզ, Տիրան Էֆէնտիի պիտի բերէ գիրս։

«Որովհետեւ նախ Տիրոջը Սրճարանը պիտի երթայի, կանուխ իջայ Ղալաթիա։ Ժամը 6½-ին մտայ Ս. Լուսաւորչայ եկեղեցին։ Բակին մէջ դէմ առ դէմ կեցած էին Տեարք Քալանթարեանց եւ Նահապետեան։ «Շատ կանուխ եկած էք» ըսի՝ խօսքս առաջնայն ուղղելով, «Ժամացոյցէս խաբուեցայ» պատասխանեց։ Նախամարդն անշուշտ աւելի երջանիկ էր, որ կենդանի էակ է մը, կնոյմէ մը խաբուեցաւ՝ մտածեցի։ Տ. Նահապետեանին բան չը հարցուցի. մտադրաւ կ'երեւէր. կարծես թէ տակաւին Գաւաշու Ս. Աստուածածնայ տաճարին աւերակաց առջեւ կը գտնուէր՝ որուն նկարագրութիւնն այնքան յուզմամբ կարգաց ամեն հայ ուրբաթ աւուր։ Արեւելի մէջ, Խօսքի չը բռնուեցայ։ Տիրոջը Սրճարանը պիտի երթայի, տէրուական սուրճ պիտի լսէի։ Կրէնքս ըսելով՝ հեռացայ պատուական հրատարակող իրներէն, որոց մօրուսուորին գրութիւնը հրատարակի վրայ դժգոհութիւն կը պատճառեն ոմանց կամ բազմաց։ Պ. Նահապետեան՝ հակառակ իւր անուան՝ անմօրուս է... կը սխալի՞մ արդեօք։ Բայց տէրուական սուրճը պաղեցաւ. փութանք։ Ո՞ր կրնայ պատմել այդ աննիւթական սուրճին սուրբ հեշտութիւնները։ Տիրոջը Սրճարանն ակամայ թողուցի. հարկ էր Կեդրոնական վարժարան երթալ՝ հրապարակախօսութեան վրայ Ձեզի տեղեկութիւն տալու համար։ Իրաւունք չունէի՞ անցեալ անգամ յուստեա ըլլալու։ Աւետարանի խօսքին հակառակն է ճշմարիտ. չապրկալովը կը գտնէ։ Եւ այս անգամ գտայ Սրահին մէջ... եւ այս անգամ չը գտայ Սրահին մէջ նստելու տեղ։ Պ. Քալանթարեանց կը ճառագայթէր. պարագայ տեղ երկու ժամ առաջ եկած էր։ Սրբ եւ կանայք, աշխարհականք եւ եկեղեցականք, բժիշկք ու փաստաբանք, խմբագիրք եւ ուսուցիչք, կարծես իրարու ականջէ կը խլէին հրապարակախօսին խօսքերն, որք թուչնոց այէս կը սրանային։ Կրթական Տեսուչին բով կը բազմէր Հայկական Արթարանի Տնօրէնն, որ ուշ եկաւ ու կանուխ մեկնեցաւ, ինչպէս որ կը վայելէ Դէմ ճարտար՝ Հրապարակ բառերով Պարոնեան ալ ուշ հասաւ. բայց Խիշիկ համար երբէք ուշ չէ. Խիշիկ միշտ եւ ամեն տեղ նիւթ կը գտնէ։ Եւ Պարոնեան կանուխ չը մեկնեցաւ։ Միայն թէ մօրք մերթ բացակայ կը թուէր Սրահէն. այն վայրկեաններուն անշուշտ Սրայի կամ ուրիշ հին իմաստասրահներու մէջ կը գտնուէր՝ Հելլէն մեծ վարպետներուն շրթունքներէն կ'ախտած։

«Պարոն Դաւիթ Բալանթարեանց՝ որպէս ըսի՝ համակրելի մարդ մ'է։ Մարմնապէս մանկավարժի կոչում ունի, ինչ որ առաջին պահանջելի բանն է։ Երբ տղայոց մէջ մտնէ, «Հայրիկը եկաւ» պիտի աղաղակեն աղայը ցնծութեամբ, փոխանակ «Պատուելին կամ Բալանթարեանց» ըսելու։ Քաջակամ թխադոյն երիտասարդ, ուղիղ հասակ՝ բաւական ստուար, լայն արտացոյց ճակատ, մեծ սեւագոյն աչքեր, սակայն մանր խօսակցութեան մ'ունի Պ. Բալանթարեանց՝ եթէ կրնամ այսպէս բացատրել։ Ինչպէս որ հացը կը մանրես վառեակներուն ու թոշոններուն առջեւ, այնպէս ինքն ալ կը մանրէ կը փշրէ խօսքերը՝ բառերուն կէսն ու տեղով Անգղիացւոց նման։ Որքան ցաւալի է որ իր ունկնդիրը մանուկներ՝ կամ Ռուսահայոց բառով՝ երախտներ չըլլան։ որովհետեւ բուն հրապարակախօսը, նա որ չափաւաս ու զարգացեալ մարդոց առջեւ կը խօսի, մեծ մեծ պարբերութիւններ ունի, զորս կ'արտասանէ հնչուն ձայնով, յամր յամր, որոշ որոշ Սակայն միթէ իր ունկնդիրը երախտներ չեն Ռուսահայ մանկավարժին համար։ Ինչ կարծիք ալ Պ. Հրապարակախօսն ունենայ Թրքահայոց վրայ, եւ այդ անձին շատ յարեցայ. եւ եթէ կը ձանձրանամ իր դասախօսութիւններէն՝ ուր շատոնց գիտցած բաներս ինձ կը կրկնէ, սակայն կը զուարճանամ իր դասախօսութեան եղանակին պատճառաւ, իր լեզուին պատճառաւ։ Եթէ «մով խօսէր, աւելի պիտի ախորժէի» երգի նման բան մը պիտի ըլլար հրապարակախօսութիւնը։ Այսու հանգերձ, միշտ անուշ է այն։ Մտիկ ըրէր Պ. Դասախօսին. «Սուր քայնէ օղը կը քողարժէ. այդ քողարժիւնը . . .» Ա՛հ, լեզուին այդ փափկացումը, իգացումը, կը հմայէ պիս Գալիի տեղ հանկ կ'ըսէ Պ. Բալանթարեանց. հոս ռամիկներն այդպէս կ'արտասանեն. բայց Պ. մանկավարժին բերնին մէջ՝ բառը քաղցր կը հնչէ. «Կանկը սիրեմ» կ'ըսես ինքնիրենդ։ Սրբարեւ գեղեցիկ կանկ մ'ունի Ռուսահայ մանկավարժն. աչքերդ կը սիրեն լողալ այդ փայլուն ճակատին մէջ, որ լուսեղէն լճակ մ'է գոգցես, քիչ միջ պղտորած մտահոգութեամբ ու կենաց փորձառութեամբ, պանկ խոսութեամբ եւ անփարթամութեամբ . . . Միշտ աչաց մէջ ժպիտ մ'ունի համակրելի մանկավարժն։ Ա՛հ, հայրն ի՛նչ կը զգար արդեօք, երբ որդեկին հարցընելով «Դաւիթ, դու ի՞նչ գիտես», Դաւիթ աչք ի ժպիտ կը պատասխանէր. «Հայրիկ, ես ամեն բան գիտեմ»։ Եւ արդարեւ Պարոն Դաւիթ Բալանթարեանց՝ իբրեւ ամեն Ռուսահայ ինքզինքն անտարակոյս ամենագէտ կը կարծէ Թրքահայոց հետ բաղդատելով, զորս ամենատգէտ կը նկատէ։ Ի՛նչ ալ մտածէ կամ ի՛նչ ալ ըսէ, եւ յաւէտ ախորժանօք պիտի լսեմ, այո՛, Պ. Բալանթարեանցի դասախօսութիւններն։ Օրինակ շատ յառաջ կը բերէ, որով շատ զրաւիչ կ'ըլլան այդ հրապարակախօսութիւնը հանրութեան համար։ «Վեր առնենք մանուկները» կ'ըսէ. Ռուսահայերէն չգիտցող ունկնդիրը կը կարծէ թէ քեանէն վեր առնելը վրայ է խնդրին. հոգ ոչ զարմանալի ոչ անկարելի բան մը կայ։ Տղայոցմէ կանանցմէ Պ. Դասախօսն, եւ կ'ըսէ «Վեր առնենք կիները»։ Ունկնդիրը՝ որը Մշակ կամ Նոր-Դար չեն կարդար՝ կը խնդան եւ անոյշ մը կը յուզուին. «Մանկավարժը կիները գետնէն վեր կը վերցնէ կոր . . .» Սրբօք վեր առնել ուրիշ նշանակութիւն ունի Մանկավարժութեան մէջ» կը փոփոյս ունկնդիր մը քովինն, որ կը պատասխանէ

ըմբիծաղով. «Վեր առնել՝ Ռուսահայոց լեզուն մէջ կը նշանակէ օրինակ առնել. եթէ Մշակ կարդայիք, կը գիտնայիք»։ — «Դուք Մշակի Պօլոյ գարծակալն է՞ք» կը հարցնէ նորէն Ռուսահայերէնի տգէտ ունկնդիրը. Դրացին մատը բերնին վրայ կը դնէ ու երեսը դասաբեմին կը դարձնէ։ Կնոջ վրայ խօսելով, կարելի է որ մարդ իր չըզգգետին վրայ ալ չը խօսի. Կի՛նը շարժեալ է՝ քէն կը «կի» (ԲԵԼԴՍՆ)։ Սրբ, Պ. Բալանթարեանց հազիւ արտասանեց շո՛ր բառն ու կարմրեցաւ. քանզի յիշեց որ Թրքահայ վարժարանի մը տղայը՝ որոնց խօսած էր կանանց չորերուն վրայ՝ խնդալէն մարած էին ի լուր այդ շո՛ր բառին։ Պ. Բալանթարեանց անգամ մ'ալ կարմրեցաւ, երբ ունկնդիրը ուղեցին օդին բաղադրութեան մասին ըրած խօսքը, որ աւելի չփոթութեան արդիւնք էր եւ շատ ներելի՝ երեք ժամ տեւողութիւն ունեցող բերանացի հրապարակախօսութեան մը մէջ։ Է՛հ, Թրքահայոց այնքան տգէտ չեն։ Բայց թէ կան շատեր, որոնց համար նոր են Պ. Դասախօսին տըւած ծանօթութեանց շատեր, ատի շատ յայտնի է։

«Դասաղագարի միջոցին ունկնդիրը իրարու կը ծանօթացնէին ազգին երեւելիներն՝ որոնք ներկայ էին։ «Դուրդէն էֆէն» տին ո՞րն է» կը հարցնէ մէկը քովինն. — «Սա է. ոտքի ելաւ, առաջ կուգայ կոր. յառաջ մարտնչէ»։ — «Դուրդազդէն կերած ծեծը փառաւոր էր թէ Հրապարակէն կերածը»։ — «Արեւելեան Մամուլէն կերածն ամենէն փառաւորն էր. Մամուլեան հրատարակեց Մէլլուրեան եւ Պէրպէրեան վարժարանաց պարգեւաբաշխութեան հանդիսից նկարագրութիւնները, բայց Հայկական կրթարանինը . . . զամբիւղը նետեց»։ — «Երկրաբանի մէջ Կիւրճեանին քաջածեծն ընտոր է»։ — «Պատուական. աւելի շանթ քան ծեծ»։ — «Դուրդէն էֆէն» տին քովը նստած էր նէ, Վահան վարդապետն է»։ — «Վահան վարդապետը. հոս փողոց է. չը գիտե՞ս որ Պարտիզակի ծաղիկն եկեղեցի ու գարոց չմտնէր . . . երկրաշարժէ վախուն»։ — «Բայց խմբադրատուն կը մըտնէ»։ — «Փողոցն հոն փոխադրելու պայմանաւ»։ — «Պէտք է խոստովանիլ սակայն որ մեր դարուն մէջ ամենէն մեծ բաները փողոցը կը կատարուին . . .»

«Դասախօսը ներս մտաւ. Կը շարունակէ խօսիլ. Կենդանեաց իմացականութեան վրայ կը խօսի. փողոցի . . . չորրորդանի մանաւանդ կը յիշէ եւ կ'ըսէ. «Դուք խելօք է»։ Միծաղ ունկնդրաց մէջ, Դասախօսը չը կասկածիր պատճառին վրայ. կը կարծէ թէ շան իմացականութեան վարդապետութիւնն ինք առաջին անգամ կը յայտնէ Թրքահայոց մէջ, որը՝ իբրեւ նորանշան բան մը՝ ըմբիծաղով մը կ'ընդունին զայն բնականապէս։ Մանկավարժը գոռոզ եւ ուրախ է քան երբեք։ Իսկ իր ուրախութիւնը շարի չունի, երբ դասախօսութիւնն աւարտելով, որոտընոյ ոտ ծախահարութիւն մը կը թնդացնէ բանաստեղծ, եւ երբ ունկնդիրը կ'երթան սեղմել ջերմապէս իր ձեռքը։

«Ահաւասիկ տպաւորութիւնս այսօրեայ դասախօսութեան վրայ։ Յառաջիկայ կիրակի բարեկենդանի պատճառաւ գոց է Կիւրճեան վարժարանը։ Ըստ իսկ լաւագոյն կ'ըլլար որ դասախօս եւ ունկնդիրը՝ դիմակաւոր մտնէին սրահն, եւ Մանկավարտէզի առաջին փորձն ընէին, երգելով, պարելով, խօսակցելով, ի մի բան զուարճալի կերպիւ ուսանելով Պ. Բալանթարեանցի առաջնորդութեամբ։ Տեսականը գործնականին պի-

տի միանար — Բայց միթէ մարդիկ մանուկ են. — Անշուշտ. մարդս երբ մանուկ ըլլալէ դադարի, կը մեռնի։ Եթէ մանուկ չըլլայի, հինգ դաւաթ դարեջուր չէի պարսկեր։

«Խորին մեծարանօք
8 փետր. Ղալաթիա Անդրանիկ»

Անցեալ կիրակի երեկոյ ալ Անդրանիկ էֆէնտիէն նամակ մը ստացաւ հայրս. զայն ալ ընդօրինակեմք եւ.

«Մեծարոյ բարեկամ,

«Նորէն այսօր արտունջներ տան մէջ։ Մայրս կ'ըսէր. «Այսօր ալ պիտի երթաս տղայ, կիրակի օր մը ունիս հանգիստ ընելու, ան ալ տունը չես նստիր. չըլլար, չեմ թողուր»։ Մեծ մայրս կը մըմնջէր. «Պարտի, մեղքը չե՞ս որ երթաս. ժամէն եկար. կերակուրդ կերար. քիչիկ մը քնացիր, անկից ելիր դուրս, մէկ երկու բարեկամ տեսիր, թուղթ խաղացէք, պատեցէք. իրիկունն ալ քարոզի գացէք. մենձ պար է»։ Մօրաքոյրս կը գօչէր. «Ես ի՞նչ ըսեմ ան Պատրիարքին որ մենձ պար օրով կը թողու որ քարոզի ատեն երիտասարդները ժողովովն բողոքներուն մէջէն եկած Մոսկովիցի մտիկ ընեն. ո՞վ դիմէ հաւատքի դէմ ի՞նչ բաներ կ'ըսէ Հիմակուան երիտասարդները ասանկ եղան. «օր մը Սալմուս չը տեսայ ձեռքդ. սիրահարութեան գիրքեր են բոլոր կարդացած գիրքերնիդ. Տէր Ամենակալ մը չի կարդացիր ինձի նստէ՛ Սալմուս կարդանք. իրիկունն ալ քարոզի երթանք»։ — «Մօրքոյրիկ, վարդապետներն անգամ կուգան կոր. ես ինչո՞ւ չերթամ»։ — «Հիմակուան վարդապետներն ալ ճակի ճեպիլ. յանցանքը անոնց կարգ տուողինն է. ի՞նչ հասկնամ ճեպար բաներ. դուն չե՞ս ամեն ատեն ըսողը որ ճեպարները ու Բալանթարեանցը Հայ չեն թողուր կոր Հայաստանի մէջ. ինչո՞ւ կեցեր են ազգ վարդապետները. չերթան. Եկեղեցի եւ ըսելով կ'եկան կուգան, Բալանթարեանցը եւ զաւառները էյլեմէ չի գայ. հոն ոսկի կեղծելը մարդուն աչքին մէջը քրքրէ քրքրէ կ'ընեն։ Կրօնքը թեթեւցուցինք թեթեւցուցինք, հիմայ կրնաս նէ այլադպրեւուն, Ռուսներուն խօսք հասկցո՞ւ . . .»։ — «Բայց մօրքոյրիկ, ստորագրութիւն տուած եմ միջեւ Յունիսին վերջը ամեն կիրակի պիտի երթամ»։ — «Անոնք ձեզի չեն հաւնիր, դուք ընտոր կը հաւնիք ադ մարդոց. ստորագրութիւն կու տաք, խորհուրդ կու տաք, վաղն ալ արձան տնկելու կ'եկաք՝ իրենց մէկ արգիւնքը չի տեսած»։ Այդ միջոցին, Դաւիթ տէր էֆէնտինն որ նոյնպէս Գալիի պիտի երթար՝ դուռը զարկաւ, եւ օձիքս ազատեցի։ Բայց որքան արդեօք գո՞հ պիտի ըլլան մեծ մայրս, մայրս ու մօրաքոյրս. Պ. Հրապարակախօսին յանցանքը ստորագրութիւնս այսօր ազատեցի։ Պ. Դասախօսը թշնամանեց զիս, թշնամանեց Թրքահայերը։ Ժան Ժագ Ռուսօյի Էֆէլին վրայ խօսեցաւ. բարեկրտ անձ մ'է Պ. Մանկավարժը, կ'ըսէ որ Բոլոր ունկնդիրը կարդան Էֆէլը, — որովհետեւ Պ. Բալանթարեանց այնպէս կը կարծէ թէ Թրքահայը Պէ՛նէ Կապէն անցած չեն։ «Կարդացէք Էֆէլը»։ Այս խօսքին ինչպէս որ պէտք էի ընել Սրահէն դուրս չեկայ անձնապատուութեան զգացման անսալով. բայց ալ մտիկ չըրի Դասախօսին խօսք մը սակայն եկաւ մարմնս, սըրտիս բախեցաւ. ««Այդպէն դասախօսութեան անունով գիրք մը չունիք» ըսաւ։ Այդպէն դասախօսութեան անունով ոսկեղենիկ գիրք մը ունինք, Պարոն, որ բեւ իբրեւ հրապարակաղիր՝ ծանօթ ըլլալ պարտէր, եւ

որուն անկողնի վրայից փոխանակ ան-
տես առնելու զայն. բանդի այդ գլխից մեծ
ազդեցություն ըրած է, այնպէս որ տարի-
ներ ետքը՝ դեռ երէկ՝ Պ. Սրբիւրեան իր
վերջին նորավայրին մէջ կը յիշէր Մինաս
Զերազի Ազգայնի դաստիարակչական
այդ գիրքը չը պարունակէր ամեն մէկ մօր
իր տղան դաստիարակելու կերպին առա-
ջադրութիւնը. բայց միթէ Ազգային դաս-
տիարակութիւնը մէկ երեւոյթ միայն ունի:

Վարդապետ չը կար այս դասին. Ղա-
ւթթիւյ քարոզիչը արահէն դուրս խոհուն կը
պատէր. կրթական տեսուչը ներկայ չէր.
Գուրգէն էֆէնդիին աթոռը պարտաւ էր. Տ.
Արմէն Լուսինեան միջոց մը բեմին մօտ տա-
րաւ աթոռն եւ ծանօթագրել սկսաւ դա-
սաստանին այնքան մօտ, որ վախճայ թէ ապ-
տակ մը կուտէ Պ. բեմախօսէն. բայց ինք
ընդմիջմամբ մը կերպիւ իւրը ապտակեց Պ.
բեմախօսը: Սրահապան պատանին՝ մեծ
փայլով ունէր կարգը պահելու: Գասէն յետոյ
այս անգամ բեմախօսին անը թոթուող չե-
ղաւ. ուրախացում էր համար: Ծանօթը
մնաս բարովի համար՝ սրահէն դուրս՝ սեղ-
մեցին իր ձեռքը:

«Ներեցէք որ ես ալ գրչիս ծայրով բա-
րեկամարար սեղմելով ձեր ձեռքը»:

Մնամ յաւէտ

Ղաւթթիւ, 22 փետր.

Անդրանիկ

3 Մարտ

Մարտն ալ ճամբայ ելաւ: Արեւելիք
ընդհանրապէս ամեն դործ մարտին կը
ձգեն: Այս տարի մարտն իրաւ դործոց ա-
միս մը պիտ'ըլլայ՝ թուի: Փետրուարի վեր-
ջին կամ մարտի առաջին գիշերն՝ առնուով՝
կը սկիւեղեր դործունէութիւնն: Ամեն տուն
վերէն վար կ'աւելի, յաւելուկըն նորէն վա-
րէն վեր կը հանուի եւ էն վերի յարկէն
փողոց կը նետուի եղեր հողէ ամանի մը մէջ՝
Մարտի էֆէն Բէրէ Կէլմէն ըսելով: Տուներն
այս տարի չաւուեցան — որովհետեւ այդ
սովորութիւնն ալ վերցած է. սակայն Պատ-
րիարքարան աւելեցաւ...: Ս. Պատրիարքն
իւր հողաթափին փողիներն ուժով մը թոթ-
վեց. Ազգային Վարչութիւնն ալ Սահմա-
նադրութեան տետրն աւելի ուժով թոթվել
հարկադրուեցաւ: Երեք մատ փողի զիջ-
ուած է եղեր Սահմանադրութեան վրայ:
Որքան ժամանակէ հետէ ձեռք առնուած
չէր — Այլազետն Եղիէ վարդապետի Ու-
ստան Բարոյականի՝ եթէ վարժարանաց մէջ
առհասարակ դործածուի՝ մեծ ծառայու-
թիւն ընել կոչուած է Սահմանադրութեան:
— Գիտե՞ս, Նուրանիա՛, ես ի՞նչ նետեցի
այս տարի Մարտի գիշերն. Հայրենիք բոլոր
այն թիւերն, որք կը պարունակէին Պ. Գու-
լամիրեանցի յօդուածներն:

4 Մարտ

Հայրենասիրութեան դպրոց մը պիտ'ըլ-
լայ նոր Մարտի չաբաթաթերթին Ո՛րք է այն
անտարբեր Հեղինէն. սկսեր է հայերէն
կարդալ, ազգային պատմութեան եւ ազ-
գային գործոց վրայ տեղեկութիւններ հար-
ցնել: Այժմ հայերէն ամեն նոր հրատարա-
կութիւն կ'առնէ, կը կարդայ, մատիտով
կը նշանակէ կարեւոր տեղերն, հայրենա-
պաշտան անուն տետրի մը մէջ ալ կը ծա-
նօթագրէ: Զեմ կրնար պատմել ուրախու-
թիւնս, երբ կը յիշեմ թէ զիս այնքան կը
վերաւորէր անցեալ ամ, այնքան կը լացնէր,
ծաղրելով Հայրութիւնն եւ խնդարով ի լուր
այն ազգային աղետալի զէպերուն՝ որք
անհուն տրտմութիւն ու սրտմտութիւն
կ'ազդէին հայրենասէր հոգւոյս: — Անցեալ

որ Հայրիկին հազուադէպ հրատարակու-
թիւններէն մին ձեռքն անցեր է. վազեց,
ինձ բերաւ դռնէլով. «Կարդացէ՛ր ես...»
զայն. բայց մեր Հայրիկը մեծ բանաստեղծ
է եղեր. Այս տետրակը եւրոպացի բանաս-
տեղծ մ'ալ եթէ գրէր, բոլոր եւրոպայի
մէջ մեծ յուզումն յառաջ կը բերէր: Եւ
սկսաւ կարդալ. կայլակ մ'արտասուեց իւր
աչքէն վար գլորեցաւ: Հոգի մը փրկուած
էր, ինչպէս չը բերկրէի: Զը կրցայ համբ-
րել. գրկացի մէջ առի, համարեցի, համ-
բուրեցի՝ նոր հայրենասէր բարեկամակիս:
Այսուհետեւ իր ընկերութիւնն անձկաւ պի-
տի փնտռեմ:

5 Մարտ

Այսօր ալ շատ յուզուեցայ, Նուրանիա՛.
բայց տարբեր, տրտմաբեր յուզում է այս:
Նեկտար, թարմ ու գեղեցիկ աղջիկ, դեռ
վերտասանածայ, յիսուննոց մարդու մը պի-
տի նշանուի՝...: Այսօր իրեն էի. խօսե-
ցաւ, լացաւ, լացաւ, երբ իր սենեակն ա-
ռանձնացանք: Ինչպէս ընդդիմանայ Հայրն
այդ մարդուն հետ գործառնութիւն ունի.
այդ մարդն հարուստ է. կրնայ կինն սպա-
սաւորներով տպրեցնել, մինչ համեստ ամ-
սականի տէր երիտասարդ մը՝ ում Նեկտար
հանէր՝ միակ սղախաւոր մ'իսկ անկարող
պիտ'ըլլար պահել. եւ այդ պիտի փեսայ
մ'ալ այսպիսի ընտանեաց անյարմար էր.
Պատշաճից օրէնքն, այսպէս կ'ըլլէ: Քանի
մ'օրուան մէջ նիհարեցի է խեղճ աղջիկն.
«Հոգ չէ — կ'ըսէ եղեր հայրն իւր կնոյ» —
երբ աղջիկդ ամուսնանայ, վրայ կու գայ.
դուն անգամ չպիտի ճանչնաս, կը նայիս.
ասանկ մարդ մը մէջ մըն ալ ո՛րք ձեռք
պիտի ձգենք: Խօսեցաւ, լացաւ, լացաւ,
խեղճ Նեկտարն: Իր գրասեղանին վրայ
ձեռագիր հատոր մը կար բաց: Զեռքս առի
եւ կարդացի բարձրաձայն հետադայ տալն,
անոր վերնագրէն չը գուշակելով բնաւ պա-
րունակութիւնն՝ որ կը պատշաճէր լիովին
տարաբաղդ բարեկամակցոյս արդի վիճա-
կին:

ՀԱՄԵՍՏ ԱՂՋԻԿՆ

Վարդի բուփի մը ներքեւ ծաղկաճառ աղ-
ջիկ մը կը նիւնէր. վարդի բերր մ'աղջկան
երեսին վրայ խցնարով՝ զարդոց բզնա: Յայն-
ժամ, խօսնք ուղղելով ծաղկին, կուսանն
առ վարդի բուս գայրագին. Թո՛ղ որ ննջեմ
յանդորրու, վարդ ի՛մ սիրական. ես գուար-
ջեմ քեզ նման: Երիտասարդ մը խնդրեց ձեռ-
քս, եւ կ'ուզէն ամուսնացնել զիս ծերի մը
մէջ: Երբ իբրեւ գոսացեալ ծառ մ'է. հա-
վէն կը դողայ, անձրեւէն կը փափ, արե-
ւէն իր փառք կտորք կը բափին: Իսկ
երիտասարդն իբրեւ կոկոն մ'է վարդի.
նովն զնա կ'առուգացնէ, անձրեւէն զնա
կը փրկեցնէ, եւ այգուն բարեբար լոյսն զնա
կը բաճայ լայնաբեւ ու կը փայլեցնէ:

(Սէրաֆէմ)

ՍԻՄՕՆ ՄԻԼԻԻԴԻՆՕՎԻՉ

Հեղեղ արտասուեց՝ երբ աւարտեցի
հոսեցան հէգ աղջկանն աչքերէն: Ա՛լ չը հա-
մարձակեցայ հարցնել Նեկտարին թէ ո՞վ
էր այն երէպասաւորն որ ինքեւք էր իւր յիշ-
եմս կը կասկածէի: Բայց այս աղջիկն յոյժ
զարդունապա՛հ է: Կը խղճամ իր վրայ: Բազ-
մաց ալ ճակատագիրն, աւա՛ղ, այդ պիտ'ըլ-
լայ: Կեանքն եւ կամ աշխարհն հետըզնետէ
աւելի պիտի նմանի անտառի մը, բւր զօ-
րացեալ ծառեր իրենց գաթա բուռին վրայ
վարդ մը կրեն. դեռափթիթ գիւթիչ վարդ
մը՝ որ կը կոչուի զօսացեալ ծառին ան-
ուամբ...:

6 Մարտ

Տնփէն ինձ սէր ձգել տուաւ Տնտեսա-
գիտութեան Մօրմէս Ատամ Սմիթն ուղե-
ցի: Բաժնի տղով մ'ըսաւ. «Տնտեսագիտու-
թիւնն Ատամ Սմիթէն պիտի սկսիս. բայց,
աղջիկս, Այրենարանդ Գարագաշեանին
հետ սկսար: Պէտք է նախ տարրա-
կան գիրք մը կարդաս, եւ օրը՝ գը-
լուս մը միայն. կարդացածդ ինքնիրենդ
հարցունես, եւ մինչեւ որ խիղճդ դահա-
ցուցիչ չը դնէ պատասխանդ՝ յաճորդ դը-
լուս չանցնիս: Բեզի տամ Ժողճի Կառնիկին
համատար, կամ լաւ եւս Ժան-Պոլիսդ
Սէյրի Գաթէշէն: Ի՛նչ լաւ դասագիրք է
այդ Գաթէշէնը: Ահաւասիկ այսպիսի դա-
սագրքեր տրուելու էին մեր դպրատան տը-
ղայոց ձեռքը:

7 Մարտ

Նուարդ իւր նախախայրեցն օրինակ մը
ղրկեր է ինձ: Հայրս ալ հատ մ'առեր էր
արդէն եւ քսնի մը հատ ալ պիտ'առնէ մեր
դպրոցին աղքատիկ տղայոց նուիրելու հա-
մար, որովհետեւ աղքատ թարգմանչուհին
Ազգային Հիւանդանոցի Որոց պիտի յատ-
կացնէ Տարբաբար Մասայի վաճառմանէն
գոյացած հասոյթն: Այսօր պիտի կարդամ
Տարբաբար Մասայն. այլ Զօնն երէկ գիշեր
երիցս ընթերցայ. գորովալից, գթալից, հա-
կիրճ եւ անհուն: Օրիորդ Էսայեան յառաջ-
էլէն վրայ կը խօսի. այս առաջին երկով չը
պիտի բաւականանայ: Ի՛նչեր չը կրնար ը-
նել Նուարդ՝ այն դաստիարակութեամբ
զոր կ'ընդունի, այն հանճարով ու հարբս-
տութեամբ զոր ունի: Պէտք է հանին, Տի-
կին Աննան տեսնել այս օրերս: Ազգին օգ-
տակար ըլլալ սկսած է թուանիկն. ի՛նչ ե-
րանութիւն մայր Էսայեանի համար: — Գի-
տե՞ս ո՞վ յիշեցի, Նուրանիա՛, ի տես այդ
բառերուն՝ Տարբաբար Մասայն: Աղջիկ մը,
կին մը, հեռակայ...:

ՄԵԼԱՆԻԱ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՆ

ՍՈՎՐԱՏԷՍ

Սովրատէսը, Սփրոնիսկոս արձանագոր-
ծի եւ Ֆէնարիտէ մանկարեւածի որդին, ծնե-
ուած է 469 թուականին նախ քան զՔրիս-
տոս եւ մեռած է 559 թուականին 70 տա-
րեկան հասակի մէջ: Սա այն մարդն է, զոր
Գելլիքեան պատգամախօսը մահկանացունէ
ներէն իմաստնագոյնը ինել յայտարարեց,
եւ որը սակայն իւր նոյն այս իմաստու-
թիւնը յայնմ գտաւ, որ հասու եղաւ, թէ
ինքը տակաւին ոչինչ գիտէ: Նորա կենաց
նպատակն էր հետազօտել առաքինութիւնը
եւ նորա ամենամեծ ծառայութիւնը այն
եղաւ, որ նա առաքինութեան աղբիւրը
նոյն խկ մարդկային բնութեան մէջ որո-
նեց ու գտաւ եւ այդու դարձաւ հիմնա-
գիր ընդհանուր մարդկային եւ ամենայն
կրօնական օրէնսդրութենէ անկախ բարո-
յական վարդապետութեան: Ամենայն ճըշ-
մարիտն ու բարին — երկրորեանն եւս մի եւ
նոյնն էին նորա համար — նոյն խկ մարդոց
մէջն է, այսպէս կ'ուսուցանէր նա, զոր նո-
րանէ դուրս, լոյս աշխարհ հանելու էր:
Վասն որոյ եւ բարոյական զարգացման ա-
ռաջին պայմանը ինքնաճանաչութիւնն է:
«Ինքզինքը չճանաչել եւ չգիտցածը կարծել
թէ գիտէ, կատարեալ խեղագրութիւն է»:

Այս նպատակին անձամբ հասնելու համար նա (որպէս թշնամի ստախոսութեան եւ չլացուցիչ ցոյցերու) չէր ընդուներ եւ ոչ մի բան, որոց մէջ ինքը հաստատ համոզում եւ զոր նա իւր սեպհական խելքով ուսումնասիրած չէր, ինչպէս նաեւ չէր ուզեր առ ուրիշներուն ծամած պատշաճ տալ, ինչ որ տակաւին նոցա ներսը (հոգւոյ մէջ) արծարծուած չէ։ Եւ մանկաբարձական արուեստն — կ'ասէր նա — այնու կը տարբերի իմ մօրս մանկաբարձական արուեստէն, որ այն (արուեստը) ոչ եթէ կանանց, այլ արանց մանկածնական օգնութիւն կը հասցնէ, այսինքն ոչ թէ մարմիններու, այլ հոգիներու՝ որք նոյնպէս ընդունակ են (միտք) ծնանելու։ Մեր արուեստի մէջ ամենամեծ բանն այն է, որ նա (արուեստը) չնորհը եւ կարողութիւն ունենայ ըստուգել թէ ուսանողի հոգին արդեօք միայնակ ահ ու սխալ թէ կատարեալ եւ ճշմարիտ բան ծնանելու վերայ է։ Իմ գործը այնու եւս մանկաբարձներու գործին կը նմանի, որ ես անձամբ իմաստասիրական ոչինչ չեմ ծնալիր, այլ միայն ուրիշներու այդպիսին ծնանելուն կ'օգնեմ։ արդէն չատերը մեղադրած են զիս, թէ ես թէեւ ուրիշներու հարցումներ կ'անեմ, բայց ինքն եւ ոչ մի բանի կը պատասխանեմ, եւ սորանք բնականաբար և իրաւամբ կը հետեցնեն, որ ես խելացի բան մի պատասխանելու անկարող եմ։ Դորա պատճառն այն է, որ Աստուած մը կը հարկադրէ զիս մատուցանել այդ որդեծնական օգնութիւնը, բայց անձամբ ծնանելն կ'արգիլէ ինձ։ Հետեւաբար չեմ ես իմաստուն ոմն, եւ յիշաւի ես չեմ կարող եւ ոչ մի այնպիսի (իմաստասիրական) բան ցուցնել, որը իմ սեպհական հոգւոյ արգասիքը լինէր։ Բայց եւ այնպէս այն ամենը, որոց Աստուած թոյլ կուտայ ինձ հետ յարաբերութեան մէջ մտնել, ի սկզբան մեծաւ մասամբ տղէտ կ'երեւին, սակայն շատ անգամ անհատաւոր յարաբերութիւնը ինձ հետ անհատաւոր յարաբերութիւն ինձ հետ անհատաւոր յարաբերութիւն կ'ունենան, որը թէ՛ ինքեանց անձնապէս եւ թէ օտարներուն բացայայտ կ'երեւի։ Միայն այսքան հաստատ է, որ նոցանէ ոչ ոք ուղղակի ինձնէ բան մի ուսած է երբեք, այլ միայն իրենք իրենցմէ շատ մի գեղեցիկ բաներ են գտած եւ անմուտ միտքները պահած։ Մանկածնական օգնութիւնը ցայտ երկուսս կ'անենք։ Աստուած եւ ես։ Այսպէս հա նա օգտ իւր ծնալիքային արուեստին նմանութեամբ ուսուցան խաղաղական, հնարագորտական (heuristique) եղանակը (methode) գրաւ ու յետախնդրէ։ — Սոկրատէսի ուսուցման եղանակը անբնական էր եւ գրեցատրական, մտաւոր եւ աչքի զարնուող բաներէն սխալուող եւ պահանջուած օրինակները ամենօրեայ կեանքէ առնուած։ Այդ է պատճառը, որ նորա ժամանակակից մարդիկը զինքը կը մեղադրէին թէ նա միշտ եւ միայն բնականօրէն էլերու, դարբիններու, կօշկակարներու եւ խաղախորդներու վերայ կը խօսի։ Այսպէս նա կանոնաւորաբար մինչեւ ուշ երեկոյ կը շրջէր իւր պատանի, երիտասարդ եւ այրական հասակի աշակերտաց հետ շուկան, մարդարանները, գործանոցները, եւ կ'ըզուղուէր նոցա հետ գրեցատրելով կենաց նշանակաւի եւ կեանքի կողման (արհեստ, պաշտօն) վերայ եւ անգաղար հարցումներով կը վերլուծէր նոցա (զրոյցի յիւթին վերաբերեալ) մտապատկերները (գիտածը), որպէս զի նոցա մտքն խնդրոյն վերաբերեալ նոր միտք մի դուրս կորգէ, այն է նո-

ցա նոր միտք մի ծնանելուն նպատէ։ Այս եղանակն երկու կողմն ունէր։ Նախ մի բացառական կողմն — այսպէս կոչուած սկզբնական հեղինակն, որոյ համաձայն Սոկրատէս ինքզինքը չգիտցող կը ձեւացնէ եւ այնպէս կը ցուցնէ իւր թէ ինքը իւր խօսակցներէն ուսանիլ կ'ուզէ, սակայն նա նոցա կ'ընթերցէ քիսոսութիւնը շարունակ հարցումներով եւ անսպասելի եզրակացութիւններով, (որք որպէս բնական հետեւանք յառաջ կուգան) եւ հակասութիւններով (որոց մէջ նոքա կը խճճուին) իւր նախադրեալն։ Եւ երբ այս կերպով նոցա խօսակցը պարզ կը տեսնէ, որ խկապէս չգիտէ եղեր այն, զոր ինքը ցայսօր հաստատ գիտել կը կարծէր, կ'սկսի կատաճիլ իւր նախ միւս բոլոր ճշմարիտ համարած գաղաղութարներուն ճշգրտութեանը վերայ եւ ի վերջոյ կուգայ այն գիտակցութեան, թէ ինքը տակաւին ոչինչ գիտէ։ Ինչպէս որ բժիշկները — կ'ասէր Սոկրատէս — այն կարծիքն ունին թէ մարմինը կարող չէ մարսել կերակուրը մինչեւ որ մէկը նորա խափանաւթիքները չհեռացնէ, նոյնպէս կը մտածեն նաեւ նոքա, որոնք հոգիները մաքրել կ'ուզեն, այն է, թէ հոգին չէ կարող իրեն հարցումուած ծանօթութիւններէն (մտաւոր կերակուրը) ոչ մի շահ ունենալ մինչեւ որ նա կրթուելով զիւրագգած եւ պատկառոտ չգտնայ, չազատուի ճշմարիտ գիտութեան ճանապարհը խափանող կարծիքներէն եւ անպատ չներկայանայ, այնպէս որ նա (հոգին) միմիայն այն գիտել կարծէ, զոր նա յիշաւ գիտէ։ Այս է մտաց եւ սրտի (զգացման) իմաստնադոյն եւ նախամեծար յատկութիւնը, եւ այս իսկ պատճառաւ խօսակցական կրթութիւնը հոգեմաքրութեան ամենահիմնաւի եւ գերագանց միջոցն համարուէ։

Սոկրատէան եղանակի գրական կողմն է այսպէս կոչուած անկախաբարութեան — այն է ներածական (inductif) եղանակը, մտապատկերներու վերաբարձումն ոչ ոք ի գաղափար, ոչ ոք ի գաղափարի համաձայն սահման (definition)։ Երկու բան, կ'ասէ Արիստոտէլ, կարելի էր ամենայն արդարութեամբ Սոկրատէսին վերագրել. ներածական եղանակաւ տալացուցումները կամ ստոր գաղափարներէն բարձրագոյն գաղափար գտնելը եւ գաղափարաց ընդհանուր որոշումն (սահմանումն)։ Երբ նա մասնաւոր թանձրացեալ (concret) գէպերը առանձին առանձին բնութեան առնելէն զինի զայնս միմեանց հետ կը բաղդատէր եւ պատահականը էա կանէն կը գտնէր (մէկը ի կը նետէր), այդու ընդհանուր ճշմարտութիւն մի այնպէս պարզ կը գիտակցէր, որ հնար կ'ունենար նորա (ճշմարտութեան) թէ՛ քիւնը, թէ՛ եւս քիւնը եւ թէ՛ քիւնը կատարելապէս հետազոտել եւ սահմանել։ Արդարութեան գաղափարը գտնելու համար զորօրինակ, նա արդարութեան վերաբերեալ զանազան մասնաւոր օրինակները (գէպերը) իւր հոգու առաջը կը բերէր եւ նոցանէ գորա (արդարութեան) ընդհանուր էութիւնը դուրս կը բերէր ու կը սահմանէր, որով բոլորի (արդարութեան օրինակն րու) համար եւս ինդհանուրը, այն է բոլոր տարբեր երեւոյթներու (արդարութեան գէպերու) տրամաբանական միութիւնը կ'ըզրակացնէր։ Այս պատճառաւ եւ Սոկրատէս իւր օրանչիւր մասնաւոր առաքինութեան եւ գաղափարը կ'իմաստասիրէր, զի նա հաւատացած էր, որ գաղափարի պարզ ըմբռնումն ամենաապահով ուղեցոյցն է իւրաքանչիւր մասնաւոր գէպի եւ իւրա-

քանչիւր մասնաւոր բարոյական յարաբերութեան համար, որովհետեւ նա հաստատ համոզուած էր, որ ամեն մի գիտակցական բարոյական գործն գաղափարէ պէտք է առնէ իւր շարժառիթը։ — Ըստ այսմ Սոկրատէսի եղանակը կը կայանայ տրուած համոնման երեւոյթներու գումարէն ներածական ճանապարհով գաղափարը եւ տրամաբանական սահմանը գտնելու ճարտարութեան մէջ։ Սոկրատէս այն համոզումն ունէր, թէ արտաքին աշխարհի տեսականերու էութիւնը (գաղափարը) բնածին են մարդուս եւ թէ ճշմարտութեան եւ Աստուծոյ մասին գիտակցութիւնն ի սկզբանէ անտի կայ մարդուս մէջ եւ տարակայական իսկութիւն ունի, զի իւրաքանչիւր հոգի երկրաւոր ծնունդէն առաջ արդէն կար եւ այդ նախաժամանակեայ գոյութենէն ի վեր իսկ ճշմարիտ եւ ճիշդ գաղափարներ ունի, ուր ամենօրեայ դէպքերու եւ երեւոյթներու աշակի բազմութեան պատճառաւ յետ կը կը մղուին, եւ որք սակայն ճարտար հարցումներու միջոցաւ կարող են զարգանալ և այդու իւրաքանչիւր անձն կը յիշէ իւր բնածին ճշմարտութիւններն։

Թէեւ Սոկրատէսի բնածին գաղափարներու մասին յայտնած կարծիքը այսօր կորուսած է իւր նշանակութիւնն, զի, ըստ նորագոյն գիտակցութեան, հոգւոյ րօմանգակութիւնը մտապատկերներէ կը բաղկանայ, որք արտաքին աշխարհի մեր հինգ զգայարանաց վերայ արած ներգործութեամբը հետզհետէ կը կազմուին հոգւոյն մէջ, սակայն եւ այնպէս նորան է պարտական մարդկութիւնը ամեն ոգի կրթութեւ պատանի եւ ուսուցման ճիշդ սկզբունքներուն ըմբռնումն։ Այդ որ արուած համոնման երեւոյթներու գումարէն ներածութեամբ գաղափար կը կազմէ, նա այդ գործողութեամբ կ'արարցնէ իւր սկիզբն եւ իւրաքանչիւր այդպիսի գաղափարով մի իսկապէս հաստատուն հիմնաքար ձեռք բերած կը լինի իւր ներքին, մտաւոր չէնքին համար, որոյ ապահովութիւնը եւ գիտացկունութիւնը էականապէս պայմանաւորուած կը լինի նոյն գաղափարներու պարզութեամբն։ Եւ ուր որ, որպէս ստուցիչ, առիթ տայ իւր աշակերտին այն ճանապարհով հալթայթել իւր համոզմանց պաշարը, նա կրթական կերպով ներգործած կը լինի նորա վերայ, այն է, ոչ թէ շարժանքով բառիս ընդարձակ մտքովն առած։ Բայց եւ ուր, ընդհակառակն, բնածին գաղափարներու մասին երազէ եւ մանկան մտքէն դուրս կորչել ուզէ այն, ինչ որ նորա մէջ իսկապէս չկայ, նա անիրագործելի բանի մի ձեւնաւորած եւ իւր սանիկները մի անսակ հոգեկան մարտիրոսութեան գաղափարաւոր կլինի, որը մի մայն կատեցնող հետեւանք կարող է ունենալ։ Սոկրատէսի միտք կրթող եղանակը (ուսուցման) համապատասխան լինելով ներկայ մանկավարժութեան մէջ ընդունուած ուսուցման հարցական ձեւին, իրաւամբ արժանացած է Սոկրատէս հայր Գալիլէոյ (արուեստ կամ ձեւ հարցածեւ ուսուցման) պատուանունին։ Իւր այս հարցածեւ ուսուցման եւ իւր հզօր մտքի շնորհիւ Սոկրատէս այնպիսի բազմակողմանի եւ համաշխարհային ազդեցութիւն ունեցաւ իւր ունիկը իրենեւն վերայ, որ ոչ եթէ միայն ոգեւորեց եւ իւր շուրջը ժողովեց Աթէնքի բաղաբացիներ, ինչպէս Քէրեֆոն, որուն պատգամաբանը յայտնած էր թէ Սոկրատէս ամենախմայտունն է, նորա եղբայր Քերեկրատէսը, հարգուած վաճառականի որդի Արիստիպը,

աղքատ կոչակար Սիմոնը և այլն, այլ եւ ամբողջ Յունաստանէն եւ նորա բոլոր գաղթատեղիներէն, հիւսիսէն, հարաւէն, Սեւ ծովու ափերէն եւ Աֆրիկայի Արեւել (այժմ Գոթիենա, Տրիպոլիոյ պետութեան մէջ) քաղաքէն պանդուխտներ Աթէնք կուգային Սոկրատէսին ունկնդիր լինելու համար։ Սոկրատէս իւր կրթող զրուցատրութեամբ եւ կենդանի օրինակելի վարքով կը նպաստէր նոցանէ իւրաքանչիւրին մէջ ողբելիան համակարգութիւն կազմակերպուելուն, համաձայն նոցա իւրաքանչիւրի անհատական առանձնայատկութեանցն։ «Ես իսկապէս — կ'ասէր նա — երբէք եւ ոչ ոքի ուսուցիչ եղած եմ, բայց իմ զրուցելու եւ գործովս զբաղուած ժամանակս երբ մէկը, լինէր նա երիտասարդ թէ ծեր, ցանկութիւն է ունեցած լսել ինձ, ես այդ նորան արգիլած չեմ։ Նոյնպէս ես ոչ եթէ միայն նորա համար կ'ուսուցանեմ, որ դրամ կ'ստանամ, այլ, ինչպէս հարուստներուն՝ այնպէս եւ աղքատներուն, պատրաստ եմ հարցումներ անել եւ ով կամենայ կարող է պատասխանել եւ ականջ դնել ինչ կը խօսիմ։ Իսկ թէ մէկը այդու աւելի՛ լաւ կը գաղնայ կամ ո'չ՝ դորա համար ես պատասխանատու չեմ, զի ես ոչ ոքի ո'չ խոստացած եմ ուսուցանել եւ ոչ ուսուցած եմ։ Բայց երբ մէկը պնդէ թէ ինքը ինձնէ երբ եւ է մի բան լսած եւ ուսած է, մանաւանդ թէ այնպիսի բան, զոր ամենքն եւս լսած չ'իյնէին, ապա գիտցէք, որ նորա ասածը ճշմարիտ չէ։»

Սոկրատէս, գլխովին նուիրուած սէր մը կը ցուցնէր աշակերտներուն։ Նա ոգեւորուած էր անշահասիրական սիրով դէպ ի ճշմարտութիւն։ Նորա կեանքն ու վարդապետութիւնը ներդաշնակօրէն միացած էին նորա մէջ։ Սոկրատէս ճշմարիտ իմաստասէր մը էր, — իմաստասիրութեան Սոֆոկլէսը եւ տրամաբանութեան Ֆիդիպոսը։

Թարգմ.՝
ԳՈՂԹՆԵՅԻ

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ՄԻՍՆ ԵՒ ԱՆՈՐ ՄԱՐՍՈՒՄԸ

Մեծանուն ուսուցիչն Ժէոմէն Սէ նորերս հրատարակեց մի հոյակապ մատեան՝ որոյ նմանը չկար ցարդ բժշկական մատենագրութեան մէջ։

Սոյն հատորին մէջ՝ որ իւր հեղինակութեամբ հրատարակուող կարգ մը ուրիշ հատորներուն հինգերորդը կը կազմէ, Օթէլ Տիէօյի մեծահամբաւ բժիշկը կը խօսի նախա հասարակ կերակրաց բաղադրութեան եւ անոնց մարման վրայ, եւ յետոյ հիւանդ մարդուն կերակրոց վրայ լիովին աեղելութիւններ կուտայ ըստ անհակի հիւանդութեան, այնպէս որ ո'չ միայն բժիշկը այլ եւ գիտնական անձինք ընդհանրապէս կրնան մեծամեծ օգուտներ քաղել սոյն սքանչելի գործէն։

Գաղափար մը տալու համար Ժէոմէն Սէյի այդ աննման երկասիրութեան վրայ, փոքրիկ հատուած մը կը հաղորդեմ Մաթի ընթերցողաց, հատուած չի շահեկան ծանօթութեամբ։

Միւսը կամ խաշած կամ խորոված ի կիր կ'արկանեմք իբրեւ սնունդ. հում կը գործածեմք զայն մի միայն հիւանդութեանց մէջ, Հաստատուած է այսօր թէ միւսը կրնայ պտրուեալել մակարոյժ կենդանիներ (para-

site) Բրէշէն, Բենէա, պալէներ (թոքախտի միջոցով) եւ փոխանցիկ տարերք։

Փորձով գիտեմք որ մակարոյժ կենդանիք կրնան գաղթել մեզ եւ այլ եւ այլ փոփոխութեանց կ'ենթարկին ի մեզ։ Վասն որոյ այլ եւս ոչ ոք կ'ուտէ հում խոզի միս, յորմէ հետէ Բրէշէնէ կոչուած հիւանդութիւնն Ներսիայի ինչ ինչ մասերու մէջ կը տիրէ։ Եփելը ապահով կերպիւ կը պահէ զմեզ այդ կենդանիներէն։

Այլի միսն ալ Բենէա կուտայ մեզ։ Այժմ ապացուցուած է թէ մի եւ նոյն միսը, եթէ չեփուի, թոքախտ ալ կրնայ տալ եթէ թոքախտաւոր է կովը՝ որոյ հում միսը կ'ուտուի։ 100 աստիճանի ջերմութիւն մը անփնտռելիքէն այսպիսի միս մը։

Միսերուն մէջ կան նաեւ անտեսանելի և տնտեսելի տարերք որք յոյժ փնտաւար են և կրնան ժողովուրդները կոտորել։ Պրուէ կը պատմէ որ, քառասուն տարի առաջ, Պոնէ միոյ մէջ կովի ժանտախտ (peste) մը տիրեց որ ամբողջ աւաններ աւերակ դարձուց. բայց աղքատները գիշերայն հողէ կը հանէին ժանտախտէ մեռած կենդանեաց դիակները, երկարօրէն կը խաչէին զանոնք եւ կ'ուտէին, սակայն բնաւ չէին հիւանդանար։

Նոյնը հաստատուած է նաեւ Բրէշէնի եւ պալէներու (տես Ուսուցիչ Սէյի առաջին հատորը թոքախտի վրայ) Եւսակայն տըկար եւ նիշար տղայոց, թիֆոյէն ապաքինողաց եւ նոյն իսկ թոքախտաւորաց հում միս տալ պէտք է. այսպիսի պարագայից մէջ Բենէայի կարեւորութիւն տալու չէ, միայն հասկնալու է որ մսավաճառէն առնուած միսն առողջ կենդանոյ միս էր։ Այսու հանդերձ վայրէշան մը կրակին ցուցնելու է միսն. այս, ըստ փորձադրութեան Ժէոմէն Սէյի, բաւական է անհետացնելու վտանգն, առանց փնտաւելու այս սնունդի օգտակարութեան՝ որ նշանաւոր է հիւանդաց ունեց համար եւ ինչ ինչ պարագայից մէջ։

Հում միսը գիւրամորս է թէ եփածը։ Կարեւոր հարց մ'է այդ. եփելով միսն բոջջային հիւանդածը Ժէոմէնի կը փոխուի. մինչդեռ հում միսն նոյն հիւանդածն արգելք մ'է որ ստամոքսի հիւթը չուտ մը թափանցէ միսն ներքին հիւանդածոց մէջերն, եւ մարսէ զանոնք։

Ուրեմն ինչո՞ւ հում միս կուտանք հիւանդաց, եթէ եփածն աւելի չուտ կը մարսուի։ Ահաւասիկ հետաքրքրաշարժ հարցում մը՝ զոր հիւանդը կրնայ ընել իւր բըժշկին։ Պրուէ ասոր կը պատասխանէ թէ եփած միսերուն ապօքսիէն կոչուած բուն սննդարար մասերն մարսողութեամբ այնպէս իմն կ'այլափոխուին որ ոչ միայն մեր մարմնոյ հիւանդածոց չեն յարակցիր, այլ եւ կատարելապէս կ'աւերին եւ այդպէս կ'արտաքսուին, մինչդեռ հում միսերուն ապօքսիէները նուազ այլափոխուած լինելով անգամ մը արեան մէջ խառնուելէ ետքը, մարմնոյն վերակազմութեան լաւագոյնս կը ծառայեն։

Ասկէ ետք, Ուսուցիչ Սէ խորոված մսի վրայ կը խօսի եւ իրաւամբ կը պատուիրէ որ խորովելի միսը կենդանոյն մորթուելէն անմիջապէս ետքը գործածուելու չէ. ժամանակ մը զով օդին դնելու է. այն ատեն, կրակին ազդեցութեամբ, միսն աւելի փափուկ կը լինի։ Նոր մորթուած ատենը, միսը սննդացած լինելով, ստամոքսի հիւթը չկրնար անցնել նորա վրայ. բայց ետքը թթու մը կը գոյանայ որ կը կակղացունէ եւ կ'ուռեցնէ թանձր հիւսուածքը՝ զոր կը փոխէ նոյն թթուն գիւրածոքի նիւթի մը, այն է Ժէլաթին։

Այս սկզբունքի վրայ յենով գտնուած է որ քացախը կարի յոյժ կը նուազեցնէ միսերուն թանձրութիւնը, մանաւանդ տաքեւոր կենդանեաց միսերուն։ Մատաղ կենդանեաց միսերուն համար խորովումը առաւելութիւնն ունի որ լուծանելի մասերը կը պահէ եւ կը շատցունէ, որոնք թեւեւ ճաշակի եւ հոտոտեւեաց վրայ լաւ ազդեցութիւն մը ունին։ Սոյն լուծանելի նիւթոց միսն է աքիան որ ստէպ մսին կեղւորնը կը գտնուի. հոն է նաեւ բոլորովին հում մնացած մասն. ասոնք են ահա արիւնն ու միս կոչուածներն որ Բենէան կը հաղորդեն ճիշդ հում միսերու պէս։

Մի քուրն, ըստ Ժէոմէն Սէյի, շատ քիչ սննդարար է, եւ ամենէն լաւ շինուած քուրներն անբաւական են մարդ սնուցանելու։ Թիֆոյի ժամանակ որ այնչափ մսի քուր կուտամք հիւանդներուն, բարիք մը բրածնեմք ըլլար, որովհետեւ քիչ մը աղերու հետ զոր այս քուրը կը պարունակէ՝ մսի ալիւմինէ խեղաթիւրուած կարգ մը նիւթեր ալ տուած կ'ըլլանք որոնցմով արդէն բեռնաւորուած է հիւանդին արիւնը։

Պաղ եւ աղուած միսերը խորովածներուն չափ օգտակար եւ փոքր ինչ տարբերութեամբ սննդարար են. խաշած միսն ալ զոր շատեր կը նկատեն իբրեւ հեռի սննդարարութեան, ընդհակառակն սննդարար է յոյժ. միայն եփուելով լուծանելի մասեր կը կորսնցունէ, որոնք համը կը փախցունեն այս տեսակ մսին։ Քիչ մը բանջարեղէն եւ համեմ ալ թերին կը ընցունեն, եւ գործաւորը, ինչպէս նաեւ Ֆիզիքսպէս եւ մտաւորապէս աշխատողը, եւ զինուորը կրնան աներկիւղ ուտել զայն, փոփոխելով երբեմնակի։

Կենդանեաց միսերուն վրայ բաղադրատութիւն մը ընելով Սէ կ'ըսէ որ եզր կամ կովի միսը լաւագոյնն է. ոչխարի միսն անոր մօտ է բայց շատ իւղոտ է. ճերմակ եւ թեթեւ կոչուած միսերն աւելի գոռարամարս են որովհետեւ բջջային հիւսուածն անկատար կերպով Ժէլաթինի կը փոխուի։ Չուկի միսը Բրէշէնի մէջ եւ շատ իւղ ու պարունակելուն եւ միջին շուկանալուն պատճառաւ աւելի գոռարամարս է, բայց անգամ մը մարսուելէն ետք միւս միսերուն շափ սննդարար է։

Այսչափը միսերու առողջաբանութեան համար Գառաջիկայ յօդուածով մը կ'ամփոփեմք Ժէոմէն Սէյի տեսութիւններն ու ընդգլխաւոր կերակրոց վրայ։

ՏՕՔԹ. Ռ. ՌՕՊԷՆՍՕՆ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Երբ ժողովրդի մէջ մեծ գործէն շողորթներ, շրանձաղամիտներ ու շաղկապաններ, կեղծ բարեպաշտներ ու անուանարկներ՝ Նոցա երեսն զարկ երենց խաղաղութիւնը։

ՄԻՍԱՅԵՎ,

Ժողովուրդ - ահա այս պէտք է լինի մեր հանրային գործիչներու ոյժն ու զօրութիւնը, նորա մէջ պարտի կենտրոնացած լինել մեր հոգն ու խնամքը։ Նորա բարոյական ու մտային կենդանութիւնը, նորա բարեկեցութիւնը պէտք է որ լինին մեր գործիչներու ուղղորդութեան առարկայներն, նամանաւանդ գլխաւոր առարկայներն, որովհետեւ նորա մէջ է մեր պատգամաւորութեան ապագայի քառասունը։ Այս մասին մեր բոլոր գործիչներն որչափ աւելի

գործեն մեր ժողովրդի համար, այնչափ ա-
ռելի եւս պիտի մտնեն այն իմաստուն
քաղաքականութեան գործը կը կազմէ իւրա-
քանչիւր ազգի բարեկարգութեան, ան-
գործութեան ու երջանկութեան կենդանա-
բար ոյժն, այնչափ լաւագոյն պիտի կատա-
րեն աւետարանական սիրոյ պատուէրն, որ
կը հրամայէ խնամ տանիլ իւր մերձաւո-
րին . . .

Հայինք այն մտային կերակուրին գործը
մատակարարեն ժողովրդին եւ տեւեկեք
խղճմանքով թէ որչափ սննդար է այդ
կերակուրը ժողովրդի բարոյական ու մտա-
յին կենդանութեան եւ առողջութեան հա-
մար եւ եթէ նայինք պիտի տեսնենք որ
այդ կերակուրի մէջ կան ապականութիւն
ու գորշահոտութիւն, կան նենգամիտ նը-
պտակի արտադրութիւններն այն շտապ-
քորթ, ծանծաղմիտ ու չաղակրատ, կեղծ
բարեպաշտ ու անուանարկ մարդոց, որ
միշտ կը ձկտին ամեն պարագային կողո-
պտու հանել իրենց համար, որ կը գրեն ու
կը հրատարակեն յանուն ազգային զար-
գացման եւ որ սակայն կ'աշխատեն միմայն
իրենց անձնական շահն եւ փառամոլու-
թիւնն ի նկատ ունենալով եւ, ընդհակա-
ռակն իրենց այդ ձեռնարկներով կը վնաս-
են, կ'ապականեն ժողովրդի թարմ ու
անարատ բնազդ ու մեքենան եւ զգացումներն,
որ մուտ կը գործեն ազգային պաշտօնե-
րու մէջ յանուն ազգասիրութեան, յանուն
ազգային յառաջդիմութեան եւ որ սակայն
իրենց սրածայր եղունգն իսկ չեն զոհեր ի-
րենց պաշտօնի պարտաճանաչութեանն Այ-
նչ մասով եւ ճշմարիտ գործիչ պարտա-
կանութիւնն է երեւոյն զարնել եւ յանդի-
մանել այդպիսի մարդոց խաբարայութիւ-
նը . . .

Այն ամենը, զոր կ'ընենք ժողովուրդն
եւ զոր կը դիտէ նա, իւր մտային կերակու-
րի գլխաւոր բերքերն են: Եթէ ժողովրդի
ընթերցանութեան նիւթերն ունին լաւ
յատկութիւն, եթէ տեսարաններն եւ կեան-
քի խաղերը վայելուչ են ժողովրդի համար,
այն ժամանակ ժողովուրդն անտարակոյս
կ'ստանայ առողջարար սնունդ: Այդ սը-
նունդը կը թափմայնէ գնա, կը պարզէ եւ
կը պայծառացնէ նորա միտքն եւ հնարա-
ւորութիւն կուտայ նմա ուղղադատ եւ լր-
ջօրէն դիտել կեանքն, ուղղամտութեամբ
ըմբռնել զայն եւ ճշգրտօրէն թափանցել
նորա խորն: Իսկ եթէ ընթերցանութեան նի-
ւթն եւ պատկերներն յոռի են եւ անպիտե-
լուչ, այն ժամանակ ժողովուրդը փոխանակ
առողջարար սնունդի կ'ստանայ այն վնաս-
ակար միտքն որ միայն կը շփոթէ, կը
սղտորէ եւ կ'ապականէ մարդու մտային
եւ հոգեկան առողջ տրամաբանութիւնը:
Ժողովրդի մտային սննդեան նիւթի լաւ
ընտրութիւնը կարելի է յուսալ միայն ժողո-
ւրդեայ պատկերներէ, կարելի է ստա-
նալ այն գլխաւոր եւ այն հոգեկան որ ըն-
դունալ է քրիստոնէական գործել յողուտ հան-
րային բարօրութեան, ըստ որում օգտաւէտ
լինելու ցանկութեան հետ միասին պէտք է
ունենալ կարգաւորեալ ստեղծելու եւ կազ-
մակերպելու այսպիսի օգուտներն: Այս պա-
րագային բարի խորհուրդի եւ ազնիւ սրտի
հետ պէտք է ունենալ եւ լրջամիտ գաղափար
եւ դրական գիտութիւն: Եթէ ժողովրդի
կենսական կառավարութեան դեկն եւ մը-
տային կերակուրի պատրաստման գործն
յանձնուած լինի անմաքուր ձեռքաց մէջ,
այն ժամանակ վայ այնպիսի ժողովրդեան,
որովհետեւ նա պիտի նմանի ոչխարի հօտի
մը որի հովիւներն են գիշատիչ գայլեր աղ-

ուէսի կատարեալ խորամանկութեամբ հան-
դերձ: Այդ գիշատիչ գործիչներն, որոց
հոգւոյ մէջ մարմնացած է անձնական շա-
հասիրութիւնն եւ փառամոլութիւնն եւ
որոց մէջ դոցանէ վատ չկայ ուրիշ սրբու-
թիւն, — այդ գործիչները կ'ըսեն զգեցած
հրեշտակի դիմակներ չլինի պէս կը ծծեն
ժողովրդի արիւնն, իրենց մատներու վրայ
կը խաղցնեն պարզամիտ ժողովուրդն մի
քանի փարայի համար օտարին վաճառելով
նորա սրբազան իրաւունքները, նորա ար-
տօնութիւնները, կ'ընեն այս ամենն սա-
կայն առանց ազգասիրութեան դի-
մակն երեսէն վերցնելու: Խաւարի այդ
գործիչներն հրապարակի վրայ ունին իրենց
պաշտպանութեան վահանն եւ Զարադոսթի,
այն է վարձկան մամուլը: Վարձկան մա-
մուլն ազգօգուտի գոյն կուտայ նոցա մատ-
նիչ գործունէութեան եւ կը դրուատէ
զայն: Եւ անմեղ ժողովուրդը կը հաւատայ
կեղծաւոր մամուլին: Մամուլի գործիչներն
եւս մի անգամ բարոյական կամ նիւթա-
կան շահասիրութեան վարժուելէ յետոյ,
այնուհետեւ նոցա խղճի առաջ գոյութիւնէ
կը դադարի ամեն ճշմարտութիւն: Եւ այնու-
հետեւ որչափ մեծ լինի կաշառքն այնչափ
աւելի ճշմարիտ կը փաստաբանութիւն սուտն
նոյն մամուլի մէջ որովհետեւ այլ եւս չէ
թէ ճշմարտին, ազնիւին եւ մի խօսքով ժո-
ղովրդեան բարօրութեան ծառայելու գա-
ղափարը կը մղէ այդ երկու տեսակի գոր-
ծիչները կատարելու իրենց պաշտօնը, այլ
շահասիրութիւնն եւ փառամոլութիւնն,
ուղղակի կամ անուղղակի կերպիւ: Ըստ ո-
րում այնուհետեւ փառամոլութեան եւ
շահադիւտութեան մէջ է նոցա սիրտը,
նոցա հոգին, եւ ձեռքն սրտի ու գլխի մէջ
կը տիրապետէ նոյն ինքն փառամոլութիւն,
եւ շահադիւտութիւն, բարոյական կամ նիւթ-
ական: Հանրային գործունէութիւնը պատ-
ճառ եղած է որ մեր ժողովրդի կենցաղա-
վարութեան շրջանակի մէջ եւս ճշմարտու-
թիւնը, ժողովրդեան իրաւունքը, պատիւն
ու խղճը կամաց կամաց կ'սկսին մոռոյ-
պատ ու պղտոր ներկայացուիլ մեր ա-
ռաջ . . .

Պ. Տ.

ՊՍԵՆՈՍԻ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Պ. Ժիւլ Սիմոն, իւր վերջին յօդուած-
ներէ միոյն, երկարօրէն նկարագրելէ յետոյ
Եւրոպական պատերազմէ մը յառաջ գալիք
սարսափելի աղէտները, պերճաբօս լեզ-
ուաւ խօսքը կ'ուղղէ առ Պիզմարը Իշխան,
յանուն աշխարհի խաղաղութեան .
«Դուք կրնաք խաղաղութիւն տալ աշ-
խարհի: Այո՛, Աստուծոյ կամովը, դուք
կրնաք: Գոնէ յի թատերադրին մէջ Օգոս-
տոս կը պարծի թէ տէրն է աշխարհի: Իւր
լէզուներու շնորհիւ միայն տէրն էր աշ-
խարհի: Չեղ համար խօսք մը կը բաւէ որ
առ ձեզ գրուէք բոլոր սրտերն եւ բոլոր
կամքերն: Այո, կրնաք խաղաղութիւն տալ:
Որո՞ւն մտքէն կ'անցնէր թէ առի կրնայ միակ
մարդէ մի կախումն ունենալ: Եւ սակայն
ամեն ոք կը տեսնէ զայդ, մեծն ու պղտորն,
ամենէն խորախորհուրդ գիւնազէտներն
եւ ամենէն սղէտ դատարկատրտները գի-
տեն թէ խաղաղութիւնը ձեզմէ կախումն
ունի: Երբ ինքնին կը մտածէք, երբ դուք ձեզ

կ'ըսէք. «Ինձմէ կախումն ունի ո՛չ թէ մեծ
ճիգ մ'ընել հապա պարզ խօսք մ'ըսել խա-
ղաղութիւնն ապահովելու համար», ան-
շուշտ անհուն հպարտութիւն մը կ'զգաք:
Եւ այդպէս մտածելով չէ՞ք զգար տեսակ
մը ուրախութիւն սրուն հաւասարած չէ ոչ
մէկ մարդկային ուրախութիւն: Յիշեն ու-
նենալ երջանկութեան եւ հարստութեան
այս հեղեղն, եւ կարենալ աշխարհի վրայ
հեղուլ զայն:

Խաղաղութիւն տալը, միմայն պատերազմն
սկսելէ ետ կենալ չէ՛: Այս պահուս ուր կը
խօսիմ, ոչ ոք կը հաւտայ մօտալուտ պատե-
րազմի մը: Սակայն եւ այնպէս ոչ ոք կը
համարձակի ըսել թէ խաղաղութեան մէջ
կ'ապրինք:

Մեր արդի կացութիւնը՝ պատերազմի
կացութիւն է, իրաւ է թէ առանց հրացա-
նի հարուածներու, այլ պատերազմ, միւս
ամեն չարիքներով, — մարդոց յողմախոս
չեղձակուտումը գորանցաց մէջ, ժանտա-
տեղը, բազուկներու պակասութիւնն երկ-
րագործութեան եւ ճարտարարուեստից հա-
մար, սոսկալի ծախքեր ամեն տեսակ ուղ-
մամթերքի համար, զորաց ուղեւորն եւ յան-
ձանձուկ միլիտաներ՝ որք կը մսխուին ըն-
դունայն, առանց հաշուելու պարբերական
սարսափներն որք աղէտներու կը փոխուին,
եւ ապահովութեան պակասութիւնն որ կ'ան-
գամալուծէ վաճառականութիւնն եւ ճար-
տարարուեստներն:

Ո՛հ, աշխարհս յաւիտեական մշտնջենա-
ւոր խաղաղութիւն չ'ընդրէր ձեզմէ: Աշ-
խարհս հին փորձառու է. ալ չհաւտար հով-
ուերդութեանց: Խաղաղութիւնը չէք կըր-
նար ապահովել քան տարուան համար, ո-
րովհետեւ վերջապէս որքան ալ մեծ լինիք,
մահկանացու էակ մ'էք: Տասն տարուան
համար, դարձեալ շատ դժուար է: Փորձե-
ցէք սակայն: Չէ՞ք ուզեր եօթն տարի տալ:
Լաւ ուրեմն, եօթն տարի տուէք: Եօթ-
նամեակը, կատարեալ խաղաղութեան եօթն
տարիներ բաւ են աշխարհս փրկելու հա-
մար:

Ա. Զ. Դ.

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆՆ ԵՐ Ի ՂԱԼԱ-
թիա Յեղոս Խան, թիւ 8 և Պոլսոյ կողմ
Զ. Կ. ԹՈՐՈՍԵՍԵ ԳՐԱՏՈՒՆԸ, որ ի Պազ-
ձէ-բարու (Մաքսին կարգը թիւ 46) պա-
տիւ ունին ծանուցանել արդոյ հասարա-
կութեան թէ այս օրէն սկսեալ պատրաստ
են Եւրոպական այլ և այլ լեզուներէ պատ-
մական, մատենագրական, աշխարհագրա-
կան, մաթեմատիքական, բժշկական, ման-
կավարժական ամեն տեսակ գրքանք և ամ-
սաթերթք, ինչպէս աշխարհացոյց տախտակ-
ներ և ուրիշ գործակցան կարգ մը պիտոյք
բերել առ լաւագոյն գներով, մեծ թէ փո-
քոր քանակութեամբ:

Թէ մայրաքաղաքին և թէ գաւառաց մէջ
գտնուող գործընկերներն ինչպէս և ամեն կար-
գի անհատներէ յանձնարարութիւնը կ'ըն-
դունուին և կը կատարուին ճշգրտութեամբ և
յոյժ գոհացուցիչ պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց հա-
մար դիմել երեք շաբթի և շաբաթ օրերը
միայն Բիւզանդեան գրատունն որ ի Ղալա-
թիա Յեղոս Խան թիւ 8, և ամեն օր Զ.
Կ. Թորոսեանի գրատունը որ ի Պոլսոյ, Մաք-
սին կարգը թիւ 46:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԻՐԱԳՐՈՅ



ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՕՐԹ-Ն ՊՐԻԹԻՇ ԵՆՏ ՄԵՐԿԵՆՏԻԼ ԻՆՍՈՒՐԱՆՍ ԿՈՄՓԵՆԻԻ

NORTH BRITISH AND MERCANTILE Insurance company

Ի Լոնդոն և Նիւ-Կասթլ, հիմնադրվել է 1809

ԴՐԱՄԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 3,000,000 ՊԱՀԱՍՏԻ ԴՐԱՄ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 5,978,946
ՀԱՍՈՑԹ 1885 տարւոյ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 1,788,964

ՆՕՐԹ-Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

NORTHERN Assurance company

Ի Լոնդոն և Նիւ-Կասթլ, հիմնադրվել է 1836

ԴՐԱՄԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 3,000,000 ՊԱՀԱՍՏԻ ԴՐԱՄ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 3,131,348
ՀԱՍՈՑԹ 1885 տարւոյ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 898,072

Ապահովագրութիւն ընդդէմ հրդեհի եւ կայծակի ի գործ կը դրուին վերոյիշեալ ընկերութեանց միացեալ գործակալութեան ձեռամբ ամէն տեսակ շէնքերու, ապրանքաց եւ կարասեաց վրայ խիստ նպաստաւոր պայմանօք եւ չափաւոր գումով։
Դիւրութիւն եւ կատարեալ ապահովութիւն մեծ գումարներ ապահովագրողաց եւ առատածեռն եւ անմիջական հատուցումն վնասուց։ Ընկերութեանցս երկարատեւ փորձառութիւնն եւ լաւ յարաբերութիւնները հասարակութեան հետ պէտք է դնուի սա իրողութենէն թէ միայն հրդեհի համար իւրեանց հիմնարկութենէն ի վեր տուած վնասին 15,000,000 Անգլ. ոսկին կ'անցնի։

Մ Ա Ր Ի Թ Ա Յ Մ

Ծ Ո Վ Ա Յ Ի Ն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

MARITIME Insurance Co limited of Liverpool

ԴՐԱՄԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 500,000 ՊԱՀԱՍՏԻ ԴՐԱՄ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 120,597

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց եւ առագաստանաւուց մէջ ապրանքներն եւ դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։

Գնոց եւ վրայ տեղեկութիւն տուելու օգտոյք, պարտին դիմել Ղալաթիայ, Գոմի-սիոն խանի անկիւնը, երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ

ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈՅԵԱՆ

Գործակալ Կ. Պաւլ Բերդիւն-Երեմ Ընկերութեան

ԱՌ ԾԻՈՂՍ

Յաճախ կը պատահի որ կուրծքը կը յոգնի ծխախոտի մոլորէն եւ շնչափողի խողովակները կը գրգռին։ Այս պարագային մէջ, լաւագոյն բանն է ՆԻՔՈՍԻՏԻ բաղադրւած մը առնուլ մէն մի գլանիկէ յետոյ։

Այս հեշտահամ շաքարահատը կը զովացնէ շնչառութիւնը, կը մեղմէ խողովակաց ցաւերն եւ բարերար աղդեցութիւն մ'ի գործ դնէ, որովհետեւ կը պարունակէ ծխախոտին դեղձափը եւ կը ջնջէ անոր վնասակար ազդեցութիւնները։

Նիքոսիտի բաղադրիլն տուիները կը ծախուին ի գին 4 զրուշ, կը գտնուին ամեն լաւ դեղատանց մէջ, Ընդհանուր կեդրոնատեղին է Դեղագործական Մըթերանոցն, Ղալաթիայ մեծ փողոց թիւ 35 (Կայարան թրամուէլից)։

ԻՍԻԼԻՆ ԷՃԷՆՍԻ

Գարաքէօյ, Տէյիրմէն խան, Կ. Պոլիս

Կառաջարկէ մեր գաւառացի ընթերցողաց իրենց հաշույն գանձել իրենց առնել իրենց և իրենց հաշույն վճարել իրենց պարտքերն, ինչպէս և իրենց հազորդել առեւտրական ամեն տեղեկութիւններ եւ իրենց յանձնարարութեան համեմատ ամեն ինչ գնել միջնորդչէքով։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ

ԵԼԵԿՏՐՈ-ՆՈՑՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԵՂԵՐՈՒ

Հեռե-եւ հինգու-թեանց համար

ԳՆԴԱԿՆԵՐ Արեան պահապանութեան և ընդհանուր տկարացման համար։

ԳՆԴԱԿՆԵՐ Խոյլի համար (արեան հիւանդութիւնը)։

ԳՆԴԱԿՆԵՐ Յօդագաւերու համար։

ԳՆԴԱԿՆԵՐ Տենդերու համար։

ԳՆԴԱԿՆԵՐ Ամբիւրու և զօրացնելու համար խոշափողերը, թօքերը։

ԳՆԴԱԿՆԵՐ Ստամոքսի որդերու դէմ։

ԳՆԴԱԿՆԵՐ Հնոտախտի դէմ։

100 Գնտակներու գինն է 5 զրուշ։

Կը ծախուին Դեղագործական Մըթերանոցն, Ղալաթիայ մեծ փողոց, 35, թրամուէլից կայարան։

ԽՐԱՏ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Ամեն անոնք որ կ'ուզեն ձեռք բերել այս օտար դեղագործական մասնագիտութիւններն զոր չեն կարող գտնել իրենց դեղագործական քով, կրնան դիմել Դեղագործական Մըթերանոցն ի Կ. Պոլիս, Ղալաթիայ մեծ փողոց, 35։ Առաջումը կը լինի փոստայով, նոյն իսկ մէկ սրուակի կամ առուփի համար, եթէ խնդրանքին հետ զրկուի փոխարժէքն և դեղին ճիշդ անուէնը։ Պէտք է յատկապէս գրել սեղողին անունն եւ հասցէն։

ՀԱՐՔՈՒՄԻ ԵՂԱՆԱԿ

Հարբուխը, եթէ լաւ չխնամուի, կրնայ յառաջ բերել կուրծքի ամէն տեսակ հիւանդութիւններ, որոց առաջինն առնուած սակայն այնքան դիւրին է։ Արդարեւ, քան տարուան փորձառութեամբ ապացուցուած է թէ Հէնրի Միլնի Բար Բիւթար-Կօ և Սի-սօ Բիւթար-Կօն գործածելով ամենէն յաճախ հարբուխն ընդհուպ կ'անհետանայ իւր ամէն գէշ հետեւանքներով։

Այս պատրաստութիւնը կը գտնուին ամէն լաւ դեղարանաց մէջ, և մեծաքանակ վաճառմունք տեղի կ'ունենան ի Դեղագործական Մըթերանոցն, Կալաթիայի Մեծ փողոց, 35։

Ամեն մարդու համար ԱՌՂՁՈՒԹԵԱՆ

գլխաւոր պայմանն է թող չտալ որ մարդու մնայ լեարդին վրայ։ Արդ, Տիւրք Հէյաթի Աֆէլիէն հանդիսանալով Դեղագործական մասնագիտութեան շինուած են լեարդը մաքրելու համար թէ՛ ակտիւ համար են, և թէ՛ մէկ անգամի համար մէկ դեղահատ կը բաւէ։ Իւրաքանչիւր շիշ կը պարունակէ 20 դեղահատ։ Կը ծախուի գլխաւոր դեղատան մէջ, Ընդհանուր կեդրոնատեղին է Դեղագործական Մըթերանոցն, Կալաթիայի մեծ փողոց, 35 (Կայարան թրամուէլից)։ Գաւառները կը զրկուի առանց փոխադրութեան ծախքի, հանդերձ ծանօթութեամբ, և մեկնութեամբ, ի փոխարէն 10 զրուշ թղթատարական տոմսի։

ՆՕՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՏԱՐԱԲԱՂԴՆ ՍՈՒՍԱ

Թարգմանեաց յանգիստի

ՕՐ. ՆՈՒԱՐԴ Ե. ԷՍԱԵԱՆ

Արեւելի տապարանն ինչպէս արդէն ծանուցինք՝ գեղեցիկ եւ օգտաւէտ բարոյավէպ մը կ'ընծայէ իւր ընթերցողաց։ Այս երկասիրութեան մէջ մարդկային գործող վրայ խոհմտութեան ինչ աստիճանի աղդեցութիւն ունենալն չնայ խորհիկ և միանգամայն զուարճալի ոճով կը բացատրէ հընչակաւոր Անգլիացի հեղինակուհին՝ Միլի ինտուրթ՝ որոյ գրութիւնը ձեռքէ ձեռք կ'ալողտին իւր հայրենեաց մէջ, և ամեն լեզուի թարգմանուելու պատիւն ունեցած են։

Օր. Նուարդ Էսսեան՝ զայն ի հափոխելով կը հրատարակէ՝ և անոր հասցի թը կը յատկացնէ Ազգային Հիւանդանոցի Որբանոցին, որով թէ՛ բարոյակալ եւ թէ՛ նիւթական օգուտ մը կը մատակարարէ։ Կը շնորհաւորենք մեր նորարար թարգմանիչն և կը մաղթենք որ այս նախընթաց աշխատութիւն ուրիշ աւելի ընդարձակ և կարեւոր աշխատութեանց կարգաւ պետք ըլլայ։ Կը փութանք նաեւ ի մասնաւոր յորդորել ամեն ընթերցասէր ազգայիններն այս դիւրին ստանալու թէ՛ իրենց թէ՛ աղքատիկ որբոց օգտին համար։ Կը ծախուի ամեն հայ գրատուն։

Գին 3 դահեկան